

**ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԿՈՂՄԻՑ ՁԵՎԱՎՈՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ
ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նախագծի վերաբերյալ

2020 թվականի մարտի 11

1. Նախագծի 6-րդ հոդվածի 56-րդ կետում տրված է բնակարան հասկացությունը. *«բնակարան՝ շենք կամ շինություն, որը մշտապես կամ ժամանակավորապես օգտագործվում է որոշակի անձի կամ անձանց բնակության, հանգստի, գույք պահելու, ինչպես նաև որոշակի անձի կամ անձանց մասնագիտական կամ այլ պահանջմունքները բավարարելու համար, այդ թվում սեփական կամ վարձակալած բնակարանը, ավտոմոբիլ, այգեպուտակ, հյուրանոցային համարը, նավահանգիստ, գնացքի ճամփորդախցիկ, դրանց այլ բաղկացուցիչ մասերը, համապատասխանաբար դրանց անմիջական հարող մասնավոր տարածքները, մասնավոր տրանսպորտային միջոցը, ինչպես նաև աշխատասենյակը»:*

Հարկ է նշել, որ Նախագիծն ի տարբերություն գործող օրենքի՝ հետ քայլ է կատարել բնակարան հասկացության սահմանները նեղացնելու իմաստով: Այսպես, Նախագծում բնակարանի նկատմամբ գործող երաշխիքները տարածվում են նաև աշխատասենյակի վրա, սակայն ծառայողական ավտոմեքենան բնակարան հասկացության մեջ ներառված չէ: Հարկ է նշել, որ մասնավոր և ծառայողական տրանսպորտային միջոցների միջև՝ դրանց նկատմամբ որոշակի երաշխիքներ սահմանելու տեսանկյունից, այնպիսի ակներև տարբերություններ առկա չեն, որպիսի պայմաններում, արդարացված կլինեին քրեական վարույթն իրականացնող մարմնի կողմից խուզարկել այն առանց դատարանի թույլտվության, մանավանդ հաշվի առնելով այն հանգամանքը, որ աշխատասենյակը ներառված է բնակարան հասկացության մեջ: Նշվածի հաշվառմամբ գտնում ենք, որ բնակարան հասկացության մեջ պետք է տեղ գտնի նաև ծառայողական ավտոմեքենան:

2. Նախագծի Հոդված 8-ի 3-րդ մասի համաձայն. *«Վարույթի նյութերին կցվող յուրաքանչյուր փաստաթուղթ անմիջապես համարակալվում է ըստ էջերի՝ դրանց կցման ժամանակագրական կարգով»:*

Գտնում ենք, որ նշված ձևակերպումը պետք է լինի առավել որոշակի, քանի որ գործնականում հանդիպել են դեպքեր, երբ քրեական հետապնդման մարմինները վարույթին փաստաթղթերը կցելու իրական ժամանակագրությունը քողարկելու նկատառումներով՝ օգտագործել են համարակալման այլ եղանակներ: Կարծում ենք, որ հոդվածի ձևակերպումը պետք է լրացնել «հաջորդող ամբողջական թվերով» բառերով, որը կբացառի քրեական գործի նյութերին հետագայում փաստաթղթեր կցել և դրանց կցման իրական ժամանակահատվածը քողարկել համարակալման այլ եղանակներ օգտագործելով (օրինակ, տառերով՝ 1 ա), 1բ) կամ 1/1, 1/2 և այլն):

Այսպիսով, առաջարկվում է Նախագծի հոդված 8-ի 3-րդ մասը ձևակերպել հետևյալ կերպ. *«Վարույթի նյութերին կցվող յուրաքանչյուր փաստաթուղթ անմիջապես համարակալվում է ըստ էջերի, հաջորդող ամբողջական թվերով՝ դրանց կցման ժամանակագրական կարգով»:*

3. Նախագծի մի շարք կարգավորումներով (19-րդ հոդվածի 4-րդ մաս, 45-րդ հոդվածի 6-րդ մաս, 46-րդ հոդված և այլն) ընդլայնվել են անվճար իրավաբանական օգնություն ստանալու օրենսդրական հիմքերը և այդպիսի իրավունք ունեցող անձանց շրջանակը, ինչն ուղղակիորեն ենթադրում է հանրային պաշտպանի գրասենյակի ծանրաբեռնվածության աճ: Ողջունելով իրավաբանական օգնություն ստանալու իրավունքի հասանելիությունը երաշխավորելու և անձանց իրավունքների իրացման համար անհրաժեշտ նվազագույն երաշխիքներ սահմանելու՝ նախագծով հանձն առնված մոտեցումը, այդուհանդերձ անհրաժեշտ ենք համարում ընդգծել, որ հանրային պաշտպանի գրասենյակի ներկայիս ծանրաբեռնվածության՝ առանց այդ էլ սահմանային վիճակով պայմանավորված՝ Նախագծի ընդունման դեպքում անհրաժեշտ է լինելու վերանայել պետության կողմից անվճար իրավաբանական օգնության իրավունքի ապահովման համար հատկացվող միջոցները: Այդ առիթով մտահոգությունը պայմանավորված է նախկինում նմանատիպ օրենսդրական փոփոխություններից հետո տեղ գտած զարգացումներով, երբ հանրային պաշտպանների ծանրաբեռնվածությունը շեշտակի ավելացել է՝ նոր հաստիքների բացակայության պայմաններում: Մասնավորապես, գրասենյակն անհամաչափ ծանրաբեռնվել է անվճար իրավաբանական օգնություն ստանալու իրավունք ունեցող անձանց շրջանակը մի քանի խմբերով լրացնելու, ինչպես նաև որոշ օրենսդրական փոփոխությունների արդյունքում: Գրասենյակի անհամաչափ և լրացուցիչ ծանրաբեռնվածությունը՝ գործնականում կհանգեցնի իրավաբանական արդյունավետ և որակյալ օգնության անհասանելիության, ինչն էլ անձի օրենքով ամրագրված իրավունքը կդարձնի ձևական և անիրագործելի:

Ուստի, Նախագծով սահմանված երաշխիքներին համապատասխան անվճար իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը պատրանքային դարձնելուց խուսափելու նպատակով՝ Նախագծի ընդունման գործընթացի հետ զուգահեռ, անհրաժեշտ է ապահովել անվճար իրավաբանական օգնության իրավունքի երաշխիքները գործնականում:

4. Նախագծի՝ կողմերի հավասարությունը և մրցակցությունը հռչակող հոդված 21-ի 5-րդ մասի համաձայն. *«Դատարանը սահմանափակված է մեղադրանքի հիմքում դրված փաստական հանգամանքներով, սակայն կաշկանդված չէ մեղադրյալին վերագրվող արարքին տրված իրավական գնահատականով»*: Ակնհայտորեն, մեղադրյալին վերագրվող արարքին տրված իրավական գնահատականով դատարանի կաշկանդված չլինելը հատվելու է անձի արդար դատաքննության իրավունքի մաս կազմող՝ զենքերի հավասարության իրավունքի հետ այն բոլոր դեպքերում, երբ դատարանը դատաքննության ավարտին որոշի մեղավոր ճանաչել անձին ավելի խիստ պատասխանատվություն նախատեսող հոդվածով: Նման դեպքերում ստեղծվելու է մի իրավիճակ, երբ անձը ողջ դատավարության ընթացքում պաշտպանվել է մի մեղադրանքից՝ իր ողջ պաշտպանության մարտավարությունն ու ներուժն ուղղելով դեպի առաջադրված մեղադրանքից պաշտպանվելը, սակայն քրեական պատասխանատվության է ենթարկվելու առավել խիստ պատասխանատվություն նախատեսող հոդվածով, առանց դրանից պաշտպանվելու ողջամիտ հնարավորության: Արդյունքում տուժելու է թե՛

արդյունավետ պաշտպանության, և թե՛ զենքերի հավասարության անձի իրավունքը, իմաստագրկվելու է մրցակցության սկզբունքը, և ամենավտանգավորը՝ դատարանը կատարելու է մեղադրանքի կողմի գործառույթ՝ արդարադատություն իրականացնող մարմնից վերաժվելով քրեական հետապնդման մարմնի:

Նույն կերպ, Նախագծի 277-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ դատարանն իրավասու է հաստատված կամ հերքված համարել միայն մեղադրյալին ներկայացված մեղադրանքի հիմքում դրված փաստական հանգամանքները: Վերդիկտ կայանելիս դատարանը, դուրս չգալով մեղադրանքի հիմքում դրված փաստական հանգամանքների շրջանակից, կարող է փոխել մեղադրյալին վերագրվող արարքին տրված իրավական գնահատականը, եթե տարբերվող իրավական գնահատականի հարցը պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում քննարկել է կողմերի հետ:

Ինչպես արդեն նշել ենք վերևում՝ այս դրույթն ուղղակիորեն հակասում է կողմերի մրցակցության սկզբունքին, քանի որ այդ կերպ դատարանը դադարելու է արբիտրի դեր կատարելուց և հանդես է գալու մեղադրանքի անունից:

5. Նախագծի հոդված 43-ում թվարկվում են մեղադրյալի իրավունքներն ու պարտականությունները: Նույն հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն մեղադրյալն իրավունք ունի. *«խորհրդապահական կարգով (կոնֆիդենցիա), անարգել տեսակցել իր պաշտպանի հետ՝ առանց տեսակցությունների սահմանափակման, բացառությամբ մեղադրյալի մասնակցությամբ վարության գործողություններ կատարելու դեպքերի»:*

Կարծում ենք, որ մեջբերված կետում նշված սահմանափակումը կարող է հանգեցնել պաշտպանության արդյունավետության սահմանափակման, քանի որ մեղադրյալը կարող է անհրաժեշտություն համարել խորհրդակցել իր պաշտպանի հետ և քննարկել պաշտպանության մարտավարություն՝ իր իսկ մասնակցությամբ կատարվող վարության գործողությունների հետ կապված: Հետևապես, քրեական վարույթն իրականացնող մարմինը չի կարող իր հայեցողությամբ սահմանափակել անձի պաշտպանության իրավունքը՝ գերակայություն տալով այդ պահին քննության շահին: Գտնում ենք, որ նշված սահմանափակումից բացառություն պետք է կազմեն այն բոլոր դեպքերը, երբ տեսակցությունը կապված է վարության գործողություններին մասնակցելու կապակցությամբ տրամադրվող իրավաբանական օգնությանը:

6. Մեղադրյալի իրավունքներն ու պարտականությունները սահմանող Նախագծի հոդված 43-ի ուսումնասիրությամբ պարզ է դառնում, որ քննչական գործողություններին մասնակցելը նախատեսված չէ որպես մեղադրյալի իրավունք (իհարկե, խոսքը չի վերաբերում այնպիսիներին, որոնց մասնակցելը պարտականությունների ցանկում է նախատեսված): Այսինքն, անձը չի կարող հրաժարվել մասնակցել, օրինակ, իր մասնակցությամբ կատարվող առերես հարցաքննությանը: Կարծում ենք, սա ուղղակիորեն հակադրվում է անմեղության կանխավարկածին, որը նաև երաշխավորում է վարույթն իրականացնող մարմնին որևէ աջակցություն ցույց տալու պարտականությունից ազատ լինելու անձի իրավունքը: Իհարկե կարող են լինել հակափաստարկներ առ այն, որ անձը պետք է մասնակցի քննչական գործողություններին և օգտվի լռելու իր իրավունքից (պաշտպանվի այդ կերպ), սակայն գործող պրակտիկան հաշվի առնելով, քննիչը կարող է

կազմակերպել առերես հարցաքննություն, անձին բացատրի լռելու իր իրավունքը, միևնույն ժամանակ տուժողը կամ վկան մեղադրյալի լռելու պայմաններում տան վերջինիս մերկացնող ցուցմունքներ, որոնք էլ անխուսափելիորեն կդրվեն մեղադրանքի հիմքում: Արդյունքում, մեղադրյալն անուղղակիորեն աջակցություն է ցուցաբերում իր դեմ ապացույցներ ձեռք բերելուն՝ պարզապես ֆիզիկապես ներկա գտնվելով կատարվելիք քննչական գործողություններին: Հետևապես, մեղադրյալի համար քննչական գործողություններին մասնակցելը պետք է լինի իրավունք, քանի որ որոշ դեպքերում լռելը բավականաչափ արդյունավետ պաշտպանվելու միջոց չէ՝ բացառությամբ այն գործողությունների, որոնց մասնակցելը վերջինիս համար պարտականություն է:

7. Նախագծի հոդված 45-ի 2-րդ մասով սահմանվում է քրեական վարույթին հանրային պաշտպանի ներգրավվման դեպքերը: Մասնավորապես, համաձայն նորմի կարգավորման՝ *վարույթն իրականացնող մարմինը ՀՀ փաստաբանների պալատից պահանջում է պաշտպան նշանակել, եթե՝*

1) *նույն օրենսգրքով նախատեսված դեպքերում պաշտպանի մասնակցությունը վարույթին պարտադիր է, իսկ մեղադրյալը պաշտպան չունի.*

2) *մեղադրյալը հայտարարում է, որ չունի բավարար միջոցներ պաշտպանի ծառայությունների դիմաց վճարելու համար:*

Դրան զուգահեռ, հոդված 167-ի 6-րդ մասով առաջարկվում է սահմանել, որ *եթե դատապարտված մեղադրյալը կամ տուժողը ակնհայտ վճարունակ է, ապա դատարանն իրավասու է նրանից բռնագանձել իրեն ցույց տրված իրավաբանական օգնության վճարման համար պետության կրած ծախսերը՝ բացառությամբ այն դեպքի, երբ մեղադրյալին իրավաբանական օգնությունը ցույց է տրվել անկախ նրա կամքից:*

Ուշագրավ է, որ Նախագծով վերանայվել է գործող օրենսգրքի այն կարգավորումը, որը թույլ է տալիս վարույթն իրականացնող մարմիններին ազատել կասկածյալին կամ մեղադրյալին իրավաբանական օգնության վճարից, որը գործնականում կիրառվում է մեխանիկորեն՝ առանց բավարար հիմքերի: Ընդ որում, այս որոշումը կայացվում է նույնիսկ դատավարության սկզբանական փուլում, երբ անձի գույքային վիճակի վերաբերյալ տեղեկություններ վարույթն իրականացնող մարմնին կարող են քիչ հայտնի լինել կամ ընդհանրապես հայտնի չլինել: Հետագայում ևս մեղադրյալի անվճարառնակությունը որևէ կերպ չի ստուգվում:

Նշված իրավիճակը խնդրահարույց է այն առումով, որ թեև օրենսդրությամբ նախատեսվում է, որ վերջնական դատական ակտ կայացնելիս դատարանը կարող է դատապարտյալի վրա դնել նրան ցույց տրված իրավաբանական օգնության վճարման համար պետության կրած ծախսերի հատուցման պարտականություն, այդուհանդերձ կաշկանդված լինելով վարույթի նախորդ փուլերում կայացված՝ անձին իրավաբանական օգնության վճարից ազատելու մասին որոշմամբ, համապատասխան հիմքերի առկայության դեպքում նույնիսկ դատարանները զրկված են լինում այդպիսի պարտականություն դատապարտյալի վրա դնելու հնարավորությունից:

Մինչդեռ գործնականում բազմաթիվ են դեպքերը, երբ չնայած նախապես կայացված որոշմանը՝ անձին իրավաբանական օգնության վճարից ազատելու մասին, վարույթի հետագա փուլերում անձի անվճարունակ լինելու մասին որևէ տվյալ բացակայում է,

ավելին՝ ի հայտ են գալիս անձի վճարունակ լինելու հանգամանքը հավաստող հավաստի տվյալներ:

Ողջունելով Նախագծում առաջարկվող այս մոտեցումը, որը լուծում է նկարագրված խնդիրը, այդուհանդերձ գտնում ենք, որ առաջարկվող կառուցակարգը գործնականում ապահովելու համար անհրաժեշտ է ներդնել որոշակի գործիքներ:

Մասնավորապես, առաջարկում ենք ամրագրել անվճարունակության վերաբերյալ որոշակի չափանիշներ: Որպես ուղենիշ կարող է լինել «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի համանման կարգավորումը, որը գործնականում ապացուցել է իր արդյունավետությունը: Այսպես, առաջարկվում է անվճարունակ համարել այն անձին, որը չունի բավարար եկամուտ, համատեղ բնակվող աշխատող ընտանիքի անդամ, ինչպես նաև բացի անձնական բնակարանից, որպես սեփականություն չունի այլ անշարժ գույք կամ նվազագույն աշխատավարձի հազարապատիկը գերազանցող արժեքի փոխադրամիջոց:

Բացի այդ, առաջարկվում է ամրագրել հոդված 45-ի 2-րդ մասի 2-րդ կետով նախատեսված դեպքերում պաշտպան նշանակելուց հետո գործի քննության ընթացքում մեղադրյալի ֆինանսական վիճակը և անվճարունակության վերաբերյալ նրա հայտարարության արժանահավարտությունը ստուգելու ուղղությամբ միջոցներ ձեռնարկելու՝ վարույթն իրականացնող մարմնի պարտականությունը:

8. Նախագծի հոդված 47-ի 3-րդ մասը սահմանում է. *«պաշտպանից հրաժարված մեղադրյալն իրավունք ունի ցանկացած պահի պահանջելու վարույթին ներգրավել **նոր պաշտպան**: Նոր պաշտպանի մասնակցությունը հիմք չէ վարույթը վերսկսելու համար»*: Վկայակոչված կարգավորման մեջ առկա **«նոր պաշտպան»** եզրույթը ենթադրում է՝ դիրքորոշման փոփոխության դեպքում նույն պաշտպանի ներգրավման անհնարինություն, անկախ այն հանգամանքից, թե ինչ պատճառով է անձը նախկինում հրաժարվել արդեն իսկ նշանակված պաշտպանից:

Նախ, պարզ չէ, նման պահանջ ամրագրելու իրավաչափ նպատակն ու անհրաժեշտությունը: Հարկ է նկատել, որ թե՛ գործող, և թե՛ Նախագծով առաջարկվող կարգավորումներով (հոդված 47-ի 1-ին մաս) պաշտպանից հրաժարվելը ենթադրում է ոչ թե կոնկրետ պաշտպանից հրաժարում, այլ հայտարարություն՝ իր պաշտպանությունն անձամբ՝ առանց որևէ պաշտպանի օգնության իրականացնելու վերաբերյալ: Հետևաբար, անհասկանալի է վարույթին նոր պաշտպան ներգրավելու քրեական վարույթն իրականացնող մարմնի պարտականություն սահմանելը, հատկապես, եթե հաշվի առնենք այն, որ նշված մոտեցումը չի բխում արդարադատության շահից: Բացի դա, նոր պաշտպանի ներգրավումը (հատկապես, եթե նա հանրային պաշտպան է) ենթադրում է ինչպես ռեսուրսների անհարկի վատնում, այնպես էլ քննության սահուն ընթացքի համար լրացուցիչ խոչընդոտների, անհարկի ձգձգումների առաջացում: Մասնավորապես, նոր ներգրավված պաշտպանը պետք է կրկին ծանոթանա գործի նյութերին, խորհրդակցի իր պաշտպանյալի հետ, մշակի մարտավարություն և կատարի մեղադրյալի պաշտպանությունը պատշաճ իրականացնելու համար անհրաժեշտ այլ գործողություններ: Հարկ է նկատել, որ «նոր պաշտպան» եզրույթից հրաժարվելը ինքնին չի ենթադրում, որ պաշտպան ունենալու ցանկություն կրկին ունենալու բոլոր դեպքերում պարտադիր պետք է վերանշանակվի նախորդ պաշտպանը, որից հրաժարվել է մեղադրյալը: Կարող են լինել

իրավիճակներ, երբ արդարադատության շահը կարող է պահանջել նաև նոր պաշտպանի նշանակում: Նման իրավիճակներ ներկայում՝ գործող կարգավորումների պայմաններում, ևս լինում են և գործնականում նշանակվում են նոր պաշտպաններ: Թեև այդպիսի դեպքերը կանոնակարգված են ՀՀ փաստաբանների պալատի ներքին իրավական կարգավորումներով, այդուհանդերձ, դրանք մինչ հիմա արդյունավետ կերպով գործել են:

Այսպիսով առաջարկում ենք Նախագծի հոդված 47-ի 3-րդ մասից հանել «նոր» բառը և այն խմբագրել հետևյալ կերպ. «Պաշտպանից հրաժարված մեղադրյալն իրավունք ունի ցանկացած պահի պահանջելու վարույթին ներգրավել **պաշտպան**: Այդ դեպքում նշանակված պաշտպանի մասնակցությունը հիմք չէ վարույթը վերսկսելու համար»:

9. Նախագծի հոդված 49-ում խոսվում է պաշտպանի իրավունքների և պարտականությունների մասին: Գործող քրեական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածը սահմանում է, որ *պաշտպան է այն փաստաբանը, որը քրեական գործով վարույթի ընթացքում ներկայացնում է կասկածյալի կամ մեղադրյալի օրինական շահերը և նրանց ցույց է տալիս իրավաբանական օգնություն՝ օրենքով չարգելված բոլոր միջոցներով*: Դա հնարավորություն է տալիս պաշտպաններին քրեական վարույթի ընթացքում, օգտվելով օրենքով նախատեսված այդ հնարավորությունից, ընտրել իր պաշտպանյալի շահերից ելնող օրենքով չարգելված ցանկացած մարտավարություն, կատարել ցանկացած գործողություն, որը բխում է իր վստահորդի շահերից, սակայն ուղղակիորեն նշված չէ օրենքում: Գործնականում այդ գործիքի կիրառման վառ օրինակ է պաշտպանյալին հարցաքննելու ժամանակ նրան հարցեր ուղղելը կամ պաշտպանյալի առերես հարցաքննության ժամանակ առերես հարցաքննության մասնակիցներին հարցեր ուղղելը, չնայած որ նշված իրավունքն ուղղակիորեն նախատեսված չէ գործող օրենքով: Նախագիծն ուղղակիորեն չի ամրագրում օրենքով չարգելված բոլոր եղանակներով պաշտպանություն իրականացնելու հնարավորությունը, ինչը, կարծում ենք, զգալի հետընթաց է, քանի որ քրեական վարույթի ընթացքում էականորեն սահմանափակվում են պաշտպանի հնարավորությունները՝ հնարավորություն տալով վարույթն իրականացնող մարմնին երաշխավորել պաշտպանի միայն այն իրավունքների իրականացումը, որոնք հատկապես մատնանշված են սույն օրենսգրքի նախագծում:

Այս առումով հարկ է նկատել, որ թեև Սահմանադրության 6-րդ հոդվածի՝ որպես անմիջականորեն գործող նորմի բովանդակությունը թույլ է տալիս պաշտպանին, ի հակառակ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց, սահմանափակված չլինել իրավասությամբ՝ կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված է Սահմանադրությամբ կամ օրենքներով, այդուհանդերձ, կարծում ենք, անհրաժեշտ է սահմանադրական նշված նորմի պահանջներից բխող կարգավորումն ուղղակիորեն ամրագրել քրեադատավարական օրենքում՝ նշված իրավունքի տարամեկնաբանման դեպքերը, վարույթն իրականացնող մարմինների ոչ իրավաչափ սահմանափակումները կանխելու, ինչպես նաև տարբեր խնդրահարույց իրավիճակներում այն՝ որպես լուծման ընդհանուր գործիք, չափանիշ ուղենշելու համար:

10. Նախագծի 62-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է. «Ընթերական վարույթի առարկայով չշահագրգռված՝ Հայաստանի Հանրապետության չափահաս գործունակ քաղաքացին է, ով վարույթն իրականացնող մարմնի հրավերով կամավոր մասնակցում է ապացուցողական գործողության կատարմանը՝ դրա կատարման փաստը, բովանդակությունը, ընթացքը և արդյունքները հաստատելու համար: Ընթերական պետք է ունակ լինի լրիվ և ճշգրտորեն ընկալելու իր ներկայությամբ կատարվող գործողությունները»:

Գործնականում բազմաթիվ են դեպքերը, երբ վարույթային գործողություններին մասնակից ընթերականները քրեական հետապնդման մարմնին ներկայացնում են իրականությանը չհամապատասխանող անձնական տվյալներ: Հետագայում՝ դատական քննության փուլերում, երբ անհրաժեշտ է լինում պարզել ապացուցողական գործողության կատարման ընթացքին և բովանդակությանը վերաբերող առանցքային նշանակության հարցեր, արձանագրություններում նշված տվյալներով անձինք չեն հայտնաբերվում՝ այդպիսի տվյալներով անձ չլինելու պատճառով: Նման իրավիճակն արժեզրկում է ընթերակայի ինստիտուտի դերն ու նշանակությունը, այն դարձնում գործնականում անարդյունավետ: Արդյունքում կասկածի տակ է դրվում ապացուցողական գործողությունը, դրա արդյունքում ձեռք բերվածը, որը նպատակ է հետապնդում բացահայտել կամ հաստատել վարույթի համար նշանակություն ունեցող հանգամանքներ, այդպիսի իրավիճակը ընդհուպ կարող է հանգեցնել ապացույցի թույլատրելիության հարցի վիճարկման: Նշված խնդրահարույց իրավիճակներից խուսափելու համար առաջարկում ենք 62-րդ հոդվածի կարգավորումներում հստակ ամրագրել, որ ընթերական կարող է որպես այդպիսին մասնակցել ապացուցողական գործողությանը անձը հաստատվելուց հետո: Ընդ որում, այն կարող է հաստատվել ինչպես անձը հաստատող փաստաթղթի առկայությամբ, այնպես էլ այլ եղանակներով: Այդ դեպքում անձը չհաստատվելու բացասական հետևանքները կկրի հենց վարույթն իրականացնող մարմինը:

11. Նախագծի հոդված 69-ը սահմանում է վարույթին օրինական ներկայացուցչի մասնակցությունը բացառող հանգամանքները: Գտնում ենք, որ վարույթին որպես օրինական ներկայացուցիչ մասնակցությունը պետք է բացառվի նաև այն դեպքերում, երբ օրինական ներկայացուցիչը ենթադրյալ հանցանքը կատարած անձն է: Այս մոտեցումը պայմանավորված է այն հանգամանքով, որ թեև նույն հոդվածի 2-րդ մասով որպես բացառող հանգամանք նշված է որպես դատավոր, հանրային մասնակից, մասնավոր մասնակից կամ վարույթին օժանդակող անձ վարույթին մասնակցելը, այնուամենայնիվ, այն դեպքերում, երբ ենթադրյալ հանցանք կատարած անձը դեռ ձեռք չի բերել վարույթի մասնավոր մասնակցի կարգավիճակ, որևէ խոչընդոտ առկա չէ նրան որպես օրինական ներկայացուցիչ ներգրավելու հարցում, ավելին՝ վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է ներգրավվել այդ անձին այդպիսի պահանջի դեպքում: Տվյալ իրավիճակներում կիրառելի չէ նաև մյուս բացառող հանգամանքը. «իր վարքագծով ակնհայտորեն վնասում է ներկայացվողի շահերին. իր վարքագծով խոչընդոտել է ներկայացվողի իրավունքների իրականացմանը կամ հանգեցրել է դրանց խախտմանը», քանի որ այս կանոնի կիրառման համար ներկայացվողի իրավունքների խախտման

հանգամանքը պետք է հաստատված լինի, մինչդեռ քննության սկզբնական փուլում այն կարող է հնարավոր չլինի հաստատել:

12. Նախագծի 110 հոդվածի 1-ին մասի համաձայն. «Սույն օրենսգրքի 108-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով ձերբակալված անձը ձերբակալման որոշումը ստանալու պահից, իսկ եթե օրենքով սահմանված ժամկետում այն չի հանձնվել, ապա իրեն ազատությունից փաստացի զրկելուց հետո 6 ժամը լրանալու պահից ձեռք է բերում սույն օրենսգրքով մեղադրյալի համար նախատեսված բոլոր վերաբերելի իրավունքները և պարտականությունները»: Նույն հոդվածի 3-րդ մասի սահմանափակումը վկայում է այն մասին, որ մինչ մեղադրյալի վերաբերելի իրավունքները ձեռք բերելը ձերբակալված անձն ունի հետևյալ իրավունքները.

- իմանալ իրեն ազատությունից զրկելու պատճառը
- պահպանել լռություն:

Հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ 2-րդ մասի 3-5-րդ կետերով սահմանված իրավունքները ծագում են հետաքննության մարմնի կամ վարույթն իրականացնելու իրավասություն ունեցող մարմնի վարչական շենք մուտք գործելու պահից: Ստացվում է, որ անձը 6 ժամ շարունակ կարող է լինել բացարձակ անպաշտպան՝ գործող 3 ժամի փոխարեն: Եթե նույնիսկ առաջնորդվենք քրեական հետապնդման մարմինների բարեխղճության կանխավարկածով, միևնույն է, առաջարկվող 6 ժամ տևողությունը չափազանց երկար ժամանակ է անպաշտպան մնալու իմաստով, մանավանդ, եթե հաշվի առնենք անձանց իրավագիտակցության ոչ բավարար մակարդակը: Նույնիսկ գործող 3 ժամվա իրավակարգավորման պայմաններում՝ քրեական հետապնդման մարմինների կողմից թույլ են տրվում չարաշահումներ: Հետևապես, գործող 3 ժամերի ընթացքում պետությունն ի զորու է ապահովել հոդվածում թվարկված իրավունքները և պետության դանդաղկետության կամ կազմակերպչական խնդիրների հետևանքները չպետք է կրի ազատ տեղաշարժման իրավունքից զրկված անձը:

13. Ձերբակալված անձի նվազագույն իրավունքները սահմանող Նախագծի հոդված 110-ի 2-րդ մասը, ի թիվս այլ իրավունքների, երաշխավորում է նաև.

- իր ընտրած անձին տեղեկացնել իր գտնվելու վայրի մասին.
- տեսակցել փաստաբանի հետ:

Նույն հոդվածի 3-րդ մասն այդ իրավունքների ծագումը կրկին կապում է հետաքննության մարմնի կամ վարույթն իրականացնելու իրավասություն ունեցող մարմնի վարչական շենք մուտք գործելու պահի հետ: Գտնում ենք, որ իր գտնվելու վայրի մասին իր ընտրած անձին տեղեկացնելու իրավունքի իրացումը չպետք պայմանավորված լինի ձերբակալվածին հետաքննության մարմնի կամ վարույթն իրականացնելու իրավասություն ունեցող մարմնի վարչական շենք բերելու պահով: Անձին նշված իրավունքից օգտվելու իրավունքը պետք է երաշխավորվի նրան փաստացի ազատ տեղաշարժվելու հնարավորությունից զրկելու պահից: Ավելին, անձին այդպիսի հնարավորություն տալը կարող է լրացուցիչ երաշխիք լինել խոշտանգումների և այլ վատ վերաբերմունքի դրսևորումները բացառելու հարցում:

Առաջարկվող կարգավորումը հնարավորություն կտա նաև հստակ արձանագրել անձին փաստացի ազատությունից զրկելու պահը, այն բոլոր դեպքերում, երբ քրեական հետապնդման մարմինը կփորձի թույլ տալ որևէ չարաշահում: Գտնում ենք, որ նույն երաշխիքներն ապահովելու կարևոր գործիք կլինի նաև պաշտպան հրավիրելու հնարավորությունը որևէ շենք մտնելու հետ չկապելը, նախ այն պատճառով, որ դա հիմնարար իրավունք է և չպետք է ենթարկվի որևէ ժամային կամ այլ սահմանափակման, բացի դա, հենց այդ իրավունքի իրացումը ի զորու է կանխել քրեական հետապնդման մարմնի հնարավոր չարաշահումները:

14. Նույն 110-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն. *«Սույն հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով սահմանված նվազագույն իրավունքի իրականացումը վարույթն իրականացնող մարմնի վերադասի համաձայնությամբ կարող է հեղափոխվել առավելագույնը 12 ժամով, եթե առկա են հիմնավոր պատճառներ, որ այդ իրավունքի անհապաղ իրականացումը կարող է խոչընդոտել հանցագործության կանխմանը կամ խափանմանը կամ հանգեցնել ապացույցների ոչնչացման կամ վնասման»:*

Գտնում ենք, որ իր ընտրած անձին իր գտնվելու վայրի մասին տեղեկացնելու իրավունքը 12 ժամով սահմանափակելու վերաբերյալ որոշման նկատմամբ պետք է տարածվի դատախազական հսկողություն և նման որոշում, հնարավոր չարաշահումներից խուսափելու նպատակով, պետք է կայացվի դատախազի թույլտվությամբ: Այլապես, սահմանափակման վերաբերյալ ձևակերպումը քրեական հետապնդման մարմնին, գրեթե ցանկացած պարագայում, հնարավորություն կտա սահմանափակել անձի այդչափ կարևոր իրավունքը, որն այլ իրավունքների իրացման երաշխիք կարող է հանդիսանալ (օրինակ՝ այդ մեկ զանգի միջոցով պաշտպան հրավիրելու): Հետևապես, օրինակ՝ հետաքննության մարմնի պետի թույլտվությունը՝ զրկել անձին իր այդ նվազագույն իրավունքից (գործնականում անձանց իրավունքներն առավելապես խախտվում են հենց ոստիկանների կողմից), չի կարող բավարար և գործունե երաշխիք լինել: Հենց այդ՝ սկզբնական և կարևոր փուլում անհրաժեշտ է անձանց իրավունքների և ազատությունների երաշխիքներ ապահովող և այդ մարմինների գործունեության օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող մարմնի կամ պաշտոնատար անձի թույլտվություն: Ինչպես հայտնի է, թե գործող օրենքով, և թե Նախագծով այդպիսի սուբյեկտ է հանդիսանում դատախազը:

15. Նախագծի հոդված 158-ը, որը կարգավորում է միջնորդությունների հարուցման և լուծման կարգը՝ որևէ նշում չի պարունակում քրեական վարույթն իրականացնող մարմնի պարտականության մասին առ այն, որ միջնորդությունների վերաբերյալ կայացվող որոշումները պետք է լինեն պատճառաբանված: Գտնում ենք՝ սա լուրջ բացթողում է, քանի որ միջնորդություն հարուցելն անձի կողմից իր իրավունքներն իրացնելու գործունե միջոց է, և քրեական վարույթն իրականացնող մարմինը պետք է պարտականություն կրի պատճառաբանել դրանց կապակցությամբ կայացվող որոշումները: Որոշումների պատճառաբանվածությունը նաև անհրաժեշտ նվազագույն պահանջ է իրավունքների հետագա արդյունավետ պաշտպանության առումով:

16. Նախագծի հոդված 192-ում սահմանվում են հանրային քրեական հետապնդման ժամկետները: Նախագծով փաստացի նախատեսվում է հրաժարվել ընդհանուր նախնական քննության ժամկետների սահմանելուց, և այդ ժամկետները կապվում են քրեական հետապնդման պահի հետ, այլ կերպ՝ ենթադրաբար հանցանք կատարած անձի իրավունքների սահմանափակման հետ: Դրա հիմքում հավանաբար այն հիմնավորումն է, որ եթե առկա չէ մեղադրյալ, հետևապես վարույթի ժամկետների երկարաձգումը որևէ անձի իրավունքների վրա բացասական ազդեցություն չի ունենում: Դրան զուգահեռ, Նախագծով նախատեսվում է նաև հրաժարվել քրեական վարույթը կասեցնելու ընթացակարգից, փոխարենը բավարարվելով միայն հանրային քրեական հետապնդման ժամկետները սահմանող՝ հոդված 193-ում թվարկված հիմքերով: Հարկ է նկատել, սակայն, որ քրեական վարույթ նախաձեռնվելուց հետո տևական ժամանակ որևէ պաշտոնական արձագանք չստանալը կարող է անուղղակիորեն խախտել հաղորդում ներկայացրած անձի կամ ենթադրյալ տուժողի իրավունքները, մասնավորապես՝ անորոշության կամ այլ կերպ՝ որոշակիության բացակայության առումով: Այդ տեսանկյունից, օրինակ, գործող օրենսգիրքը նախատեսում է քրեական հետապնդման ենթակա անձը հայտնի չլինելու դեպքում քրեական վարույթը կասեցնելու ընթացակարգ՝ համապատասխան որոշման կայացմամբ, որն ուղարկվում է շահագրգիռ անձանց: Նախատեսված է նաև նշված որոշումը բողոքարկելու հնարավորություն, ինչը հնարավորություն է տալիս վիճարկել որոշման հիմքում դրված հիմնավորումները: Մասնավորապես, օրինակ, անձը կարող է դատական կարգով պարտավորեցնել նախաքննական մարմնին կատարել լրացուցիչ գործողություններ, որոնք կարող են բացահայտել քրեական գործով պարզման ենթական հանգամանքները: Հակառակ դեպքում ստացվում է, որ հաղորդում տալուց հետո անձը կարող է որևէ պաշտոնական արձագանք չունենալ, և զրկված լինել օբյեկտիվ հնարավորությունից գնահատելու վարույթն իրականացող մարմնի ջանասիրությունը:

Ելնելով վերոգրյալից կարծում ենք, որ տևական քննության արդյունքում քրեական հետապնդման ենթակա անձը հայտնի չլինելու դեպքում՝ անհրաժեշտ է սահմանել այլընտրանքային երաշխիքներ հաղորդում տված անձանց կամ տուժողների իրավաչափ շահերը պաշտպանելու համար՝ առնվազն քրեական վարույթի ընթացքի վերաբերյալ տեղեկություններ ստանալու, վարույթն իրականացող մարմնի ջանասիրությունը գնահատելու և այն ստուգման ներկայացնելու հնարավորության առումով:

17. Հաշվի առնելով դատարանների ծանրաբեռնվածությունը, ինչպես նաև նյութատեխնիկական միջոցների սահմանափակ լինելը, գործնականում խիստ հաճախ են լինում դեպքեր, երբ պաշտպանին դատական քննության փուլում քրեական գործի նյութերի պատճեններ տրամադրվում են դժկամությամբ կամ որոշակի սահմանափակումներով (օրինակ, ասվում է՝ նստեք տեղում ծանոթացեք, նշեք գործի այն թերթերը, որոնք խիստ անհրաժեշտ են և կտրամադրվեն միայն այդ սահմանափակ ծավալով կամ, որն ավելի զավեշտալի է, դատարանը պաշտպանին տեղեկացնում է, որ վերջինս պետք է անձամբ գործի նյութերը պատճենի՝ դատարանում առկա պատճենահանող սարքի մեջոցով), ինչը

չի կարող շատ դեպքերում բացասաբար չազդել պաշտպանության արդյունավետության վրա: Ինչ վերաբերում է մեղադրյալին նախաքննության ավարտին նյութերն ամբողջությամբ տրամադրելուն, ապա սա ևս բավարար երաշխիք չէ այն իմաստով, որ պաշտպան չունեցող մեղադրյալը ոչ միշտ է ամբողջությամբ ընկալում, թե ինչ փաստաթղթի ներքևում է ստորագրում և քննիչի առաջարկով արձանագրության մեջ գրառում է կատարում, որ իրեն նյութերի պատճենները տրամադրվել են ամբողջությամբ, թեև նյութերն իրականում չեն տրամադրվել: Արդյունքում ստացվում է, որ գործին կցված է լինում արձանագրություն առ այն, որ քրեական գործի նյութերն անվճար արդեն իսկ մեղադրյալին տրամադրվել են, իսկ հետագայում վարույթին ներգրավվող պաշտպանը նյութերն անվճար ստանալու հետ կապված կանգնում է խնդիրների առաջ: Գտնում ենք, որ նշված խնդիրը կարող է լուծվել քրեական հետապնդման մարմնի համար սահմանելով պարտականություն՝ յուրաքանչյուր քրեական գործի հետ միասին դրան կցել նաև գործի նյութերի էլեկտրոնային տարբերակը, որն էլ ընդամենը թույլենք ընթացքում կարող է անվճար տրամադրվել պաշտպաններին (օրինակ՝ էլեկտրոնային փոստի միջոցով): Անհրաժեշտ է նշել, որ շատ դեպքերում դատարանները հենց այդպես էլ վարում են. ստիպված կապ են հաստատում գործը քննած քննիչների հետ և պատճենահանման երկարատև գործընթացից խուսափելու նպատակով՝ խնդրում են ուղարկել էլեկտրոնային տարբերակը, որն էլ փոխանցում են պաշտպաններին: Միևնույն ժամանակ, շատ դատարաններ ցանկություն անգամ չունեն նման կերպ վարվել և նույնիսկ արձանագրվել է դեպք, երբ պաշտպանին որպես նյութերը տրամադրելու միակ տարբերակ՝ առաջարկվել է պատճենահանել դրանք անձամբ:

18. Նախագծի հոդված 263-ի 4-րդ մասի համաձայն՝ *վարույթն ըստ ընդդատության ստացած դատարանը մինչև նախնական դատախազի նշանակելն իրավասու է որոշմամբ վիճարկել դրա ընդդատությունը: Այդ դեպքում վարույթի ընդդատության հարցը հնգօրյա ժամկետում վերջնականապես լուծվում է Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի նախագահի որոշմամբ:*

Կարծում ենք, որ Նախագծի ընդհանուր տրամաբանությունից հետևում է, որ ընդդատության մասին վեճը պետք է լուծի ոչ թե վճռաբեկ դատարանի նախագահը, այլ՝ վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահը, քանի որ Նախագիծը, ի տարբերություն գործող օրենսգրքի, վճռաբեկ վերանայման սուբյեկտ է դիտում ոչ թե վճռաբեկ դատարանին, այլ՝ կոնկրետ վճռաբեկ դատարանի քրեական պալատին (չնայած համաձայն՝ Վճռաբեկ դատարանի երկու պալատներից յուրաքանչյուրը հանդիսանում է վճռաբեկ դատարան), իսկ «ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի կարգավորումից հետևում է, որ Վճռաբեկ դատարանի նախագահը կոնկրետ քրեական գործով կարող է հանդես գալ որպես պալատի դատավոր, իսկ նման կարգավորման պայմաններում ստացվում է, որ կոնկրետ քրեական գործով ընդդատության հարցը լուծում է վճռաբեկ դատարանի քրեական պալատի դատավորներից մեկը, ով այդ գործով չի հանդիսանում վերջնական վերանայման դատական ատյանի գլուխը: Այսինքն, կարծում ենք, որ կոնկրետ քրեական գործով ընդդատության հարցի վերջնական որոշումը պետք է

լուծի վճռաբեկ վերանայման՝ որպես բարձրագույն ատյանի գլուխը՝ վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահը:

19. Նախագծի հոդված 267-ի 5-րդ մասի համաձայն՝ *վարույթին ներգրավված անձանց հետ մեկտեղ դռնփակ դատական նիստին դատարանի թույլտվությամբ կարող են ներկա լինել նաև այլ անձինք: Դատարանն իրավասու է դռնփակ դատական նիստին ներկա անձանց նախազգուշացնել դրա ընթացքում իրենց հայտնի դարձած տեղեկությունների հրապարակման անթույլատրելիության մասին:*

Կարծում ենք, որ այս դրույթի կիրառությունն ապահովելու համար պետք է քրեական պատասխանատվություն սահմանել նման նախազգուշացումից հետո այդ տեղեկությունների հրապարակման համար, այլապես, նախազգուշացումը խախտած անձի նկատմամբ որևէ ներգուծության միջոց չի լինի, և այն չի ապահովի տեղեկությունների գաղտնիության համար բավարար երաշխիքներ:

20. Նախագծի հոդված 269-ի 3-րդ մասի համաձայն՝ *նախքան հիմնական դատալսումներում ապացույցների հետազոտումն ավարտելը կամ ապացույցների հետազոտման ընթացքում հիմնական դատալսումները հետաձգելը այլ քրեական վարույթով ապացույցներ հետազոտել չի թույլատրվում:* Կարծում ենք, որ այս կարգավորումը կարող է գործերի քննության անհարկի ձգձգման պատճառ հանդիսանալ, քանի որ ստացվում է, որ եթե մի գործով դատարանն անցնում է ապացույցների հետազոտման, ապա որևէ այլ քրեական գործով չի կարող իրականացնել ապացույցների հետազոտում, այնինչ՝ պրակտիկայում գրանցվել են դեպքեր, երբ մեկ քրեական գործով վարույթի ընթացքում ապացույցների հետազոտումը կարող է մեկ տարի տևել, իսկ նման կարգավորման և դատարանների ներկայիս ծանրաբեռնվածության պայմաններում՝ քրեական գործերի քննությունը կհայտնվի փակուղում:

21. Նախագծի հոդված 369-ի համաձայն. *«Պատշաճ ձևով ծանուցված բողոքը ներկայացրած անձի կամ նրա լիազորած անձի կողմից երկու անգամ դատական նիստին անհարգելի պատճառով չներկայանալու դեպքում վերաքննիչ բողոքը թողնվում է առանց քննության»:* Նախ հարկ է նշել, որ պարզ չէ՝ խոսքը վերաբերում է անընդմեջ երկու անգամ, թե՞ ցանկացած հաջորդականությամբ չներկայանալուն: Նշված կարգավորումը ոչ միայն մտահոգիչ է այն իմաստով, որ պաշտպանվող շահն է անորոշ, այլ նաև դա ուղղակիորեն հակասության մեջ է 360-րդ հոդվածնի հետ. «Վարույթի մասնակիցների չներկայանալը խոչընդոտ չէ դատական վերանայման բողոքի հիման վրա դատալսումներ անցկացնելու համար»: Կարծում ենք, որ չներկայանալը բոլոր դեպքերում չպետք է արգելք հանդիսանա գործի քննության համար, իսկ պատշաճ ծանուցված և բողոքի քննությանը չներկայացած անձն ինքն է կրում՝ իր հիմնավորումները դատարանում չներկայացնելու դեպքում կայացվելիք հնարավոր անբարենպաստ որոշման ռիսկը:

22. Նախագծի հոդված 403-ի համաձայն՝ *նոր հանգամանքներով բողոք կարող է բերվել հետևյալ հիմքերով՝*

(...) 4) ուժի մեջ է մտել արարքի հանցավորությունը վերացնող օրենք, **եթե այդ օրենքով նախատեսված է նոր հանգամանքներով վերանայման հնարավորությունը**:

Առաջարկում ենք հրաժարվել «**եթե այդ օրենքով նախատեսված է նոր հանգամանքներով վերանայման հնարավորությունը**» ձևակերպումից, քանի որ արարքի հանցավորությունը վերացնող օրենքն ամեն դեպքում պետք է ունենա հետադարձ ուժ, ինչն էլ ուղղակիորեն բխում է ՀՀ Սահմանադրության 72-րդ հոդվածից. «Ոչ ոք չի կարող դատապարտվել այնպիսի գործողության կամ անգործության համար, որը կատարման պահին հանցագործություն չի հանդիսացել: Չի կարող նշանակվել ավելի ծանր պատիժ, քան այն, որը ենթակա էր կիրառման հանցանք կատարելու պահին: Արարքի պատժելիությունը վերացնող կամ պատիժը մեղմացնող օրենքն ունի հետադարձ ուժ»:

23. Նախագծի հոդված 410-ի 2-րդ մասի համաձայն. «Հոգեկան խանգարումների հետ չկապված մտավոր սահմանափակումների մասին վկայող տվյալների առկայության դեպքում պետք է պարզվի նաև, թե արդյոք անչափահասը կարող էր ամբողջությամբ գիտակցել իր գործողությունների (անգործության) փաստական բնույթը և **հանրային վտանգավորությունը** կամ ղեկավարել դրանք»: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ քրեական նոր օրենսգրքի նախագծում «հանրային վտանգավորություն» եզրույթը փոխարինվել է «հակաիրավականություն» եզրույթով, ուստի նպատակահարմար է քննարկվող նախագծում տեղայնացնել նույն ձևակերպումը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի, ՀՀ քրեական օրենսգրքի նախագծերն ուսումնասիրելու և հնարավոր առաջարկություններ ու դիտողություններ ներկայացնելու նպատակով ՀՀ փաստաբանների պալատի կողմից ձևավորված աշխատանքային խումբ

Համակարգող՝

Պալատի նախագահի տեղակալ, փաստաբան Հարութ Ակլունց

Անդամներ՝

- **Փաստաբան Ահարոնյան Ռոման (արտոնագիր՝ թիվ 1289)**
- **Փաստաբան Աղաջանյան Էդուարդ (արտոնագիր՝ թիվ 134)**
- **Փաստաբան Գրիգորյան Նիկոլայ (արտոնագիր՝ թիվ 1713)**
- **Փաստաբան Կոչուբան Ալեքսանդր (արտոնագիր՝ թիվ 2606)**
- **Փաստաբան Հակոբյան Մհեր (արտոնագիր՝ թիվ 1205)**
- **Փաստաբան Ղազարյան Արթուր (արտոնագիր՝ թիվ 439)**
- **Փաստաբան Ղազարյան Լևոն (արտոնագիր՝ թիվ 2184)**
- **Փաստաբան Ջաղինյան Սամվել (արտոնագիր՝ թիվ 487)**
- **Փաստաբան Սարգսյան Արսեն (արտոնագիր՝ թիվ 1090)**
- **Փաստաբան Ֆանյան Արմինե (արտոնագիր՝ թիվ 1262)**